

ԱՐԵՒՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ
Ուրբաթ, 14 Նոյեմբերի, 2008

ՀՀՂ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէն Վաշինգտոնում ՀՀ Դեսպանին Նոյեմբերի 10-ին յղած յատուկ գրութեամբ ողջունել եւ իր գոհունակութիւնն է յայտնել Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի կատարած այն յայտարարութեան համար, որով արտգործնախարարը «աղաւաղուած ու գլխիվայր ներկայացուած» էր բնութագրել թուրքական «Ձաման» թերթում վերջերս հրապարակուած հաղորդագրութիւնը, ուր վկայակոչելով արտգործնախարար Նալբանդեանին ընդվզեցուցիչ արտայայտութիւններ էր կատարուել Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ: Գրութեան մէջ Կենտրոնական Կոմիտէն խրախուսիչ է համարել Հայաստանի արտգործնախարարութեան այն յստակեցումը, թէ «Հայաստանը չի կարող հանդուրժել Հայոց Ցեղասպանութեան ժխտողականութեան որեւէ դրսեւորում»: Նախքան սոյն յստակեցումը Կենտրոնական Կոմիտէի անդամներ՝ Ժան Գոսազեանից, Սեդո Պոյաճեանից եւ Սթիւ Տէտէեանից բաղկացած մի պատուիրակութիւն, մէկ օր առաջ այցելել էր Լոս Անջելոսում ՀՀ հիւպատոսութիւն, ուր հանդպում ունենալով գլխաւոր հիւպատոս Ամէն Լիլոյեանի հետ, նրան էր փոխանցել վերջին շրջանի կարեւոր նկատառումներն ու մտահոգութիւնները՝ Հայկական Ցեղասպանութեան ճանաչմանը խոչընդոտող թուրքական նախաձեռնութիւնների, մասնաւորաբար հայ-թուրքական յարաբերութիւնների բնականոնացումը պատմաբանների յանձնաժողովով պայմանաւորելու թուրքական ճիգերի եւ մամուլում կեղծ ու խեղաթիւրուած տեղեկագրութեամբ՝ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններում սեպ խրելու փորձերի վերաբերեալ:



Միացեալ Նահանգների պատմութեան մէջ շրջադարձային երեւոյթ հանդիսացաւ Նոյեմբերի 4-ի նախագահական ընտրութիւններում Բարաք Օբամայի յաղթանակը՝ թէ՛ համերկային եւ թէ՛ միջազգային իմաստով: ՀՀՂ Բիւրոյի անդամ դոկտ. Վիգէն Յովսէփեանն անդրադառնալով այդ ընտրութիւններին եւ արժեւորելով ընտրութիւնների կարեւորութիւնը ամերիկեան քաղաքական կեանքում ասել է, թէ «Բարաք Օբամայի ընտրութիւնը պատմական մեծ իրադարձութիւն է, որն իր հեռահաս անդրադարձն է ունենալու առաջին հերթին Միացեալ Նահանգների քաղաքական դաշտի վերածելաւորման ու ժողովրդի կեանքի վրայ: Աշխարհի ամենահզօր երկիրը համարուող Միացեալ Նահանգների նախագահական պաշտօնում Օբամայի ընտրութիւնը խոր անդրադարձ է ունենալու նաեւ միջազգային առումով՝ վերականգնելով Միացեալ Նահանգների բարոյական հեղինակութիւնը, ինչպէս նաեւ վերադասաւորման ենթարկելով երկրի առաջնահերթութիւնները: Ամերիկահայութիւնը, որ իր բացարձակ մեծամասնութեամբ քուէարկեց Բարաք Օբամայի օգտին, քաղաքական կամքի դրսեւորումով իր համակրանքը էր յայտնում ո՛չ միայն Օբամայի անձի, այլ՝ նրա ներկայացրած քաղաքական, ընկերային, բարոյական ու մարդկային առաջադրանքների նկատմամբ: Մեզ համար նուազ կարեւոր չէ ընկերային հրատապ հարցերի նկատմամբ նրա մօտեցումները, արդարութեան վերահաստատման ու համամարդկային արժեքների նկատմամբ նրա կեցուածքը: Անշուշտ, մեզ համար յատուկ նշանակութիւն ունի Օբամայի վարչակարգի որդեգրելիք քաղաքական վարքագիծը հայկական հարցերում: Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գծով նրա ցուցաբերած յանձնառու կեցուածքը՝ պատմական օրեր ապրելու լաւատեսութիւն է ներշնչում մեզ բոլորիս, իսկ հայկական բազմաթիւ հիմնահարցերում ակնկալում ենք Օբամայի վարչակարգի գործակցութիւնն ու աջակցութիւնը: Ակնկալում ենք նաեւ դրական վերաբերմունք՝ Արցախի ինքնորոշման իրաւունքի հաստատման, Հայաստանին տրամադրուող օժանդակութեան յաւելման եւ բազմաթիւ նման հարցերում եւ մեծ յոյսերով ենք ողջունում պատմական այս աննախընթաց ընտրութիւնը»,- եզրափակել է դոկտ. Վիգէն Յովսէփեանը:



Կալիֆորնիայի Հայ ուսանողական ընկերակցութիւնը, որին մաս են կազմում Կալիֆորնիայի աւելի քան 30 համալսարանների ու քոլէջների հայ ուսանողական միութիւններ, Կիրակի Հոկտեմբերի 19-ին Լոս Անջելոսին մերձակայ Լըյոլա Մէրիմոնթ համալսարանում ունեցած հանդիպման ընթացքում որդեգրել են մի բանաձեւ, որը վերահաստատում է ամերիկահայ ուսանողութեան զօրակցութիւնը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ ձեռնարկուող քայլերի եւ արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի նկատմամբ: Բանաձեւում հայ ուսանողները իրենց բողոքի ու դատապարտման ձայնն են բարձրացրել Թուրքայի կողմից Հայաստանի նկատմամբ շարունակուող շրջափակման դէմ: Յատկանշելի է,

որ սոյն բանաձեւը ուսանողներին էր ներկայացուել ՀՀԴ Շանթ ուսանողական միութեան կողմից:



ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը Նոյեմբեր 7-ին հրապարակած հաղորդագրութեամբ զոհունակութիւն է յայտնել Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի լրացուցիչ ընտրութիւնների համար, ընդ որում վերաընտրուել են Հայ Դատին մշտապէս զօրակցող նահանգային խորհրդարանի ու Սենատի մի շարք անդամներ, որոնց թւում Փոլ Գրիգորեանն ու Ջօ Սիմիթեանը: Յատկանշական է, որ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի աջակցութիւնը վայելող թեկնածուների 99 տոկոսը յաղթանակներ է արձանագրել Կալիֆորնիայի խորհրդարանի ու Սենատի ընտրութիւններում:

Հոկտեմբեր 17-19-ի շաբաթավերջին, Լաս Վեկասուս տեղի է ունեցել Հայ իրաւաբանների միութեան կիսամեայ հաւաքը, որի ընթացքում ելոյթ են ունեցել Պրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեան ու Ալիս Պետրոսանը, խօսելով ամերիկեան պետական կրթօջախներում Հայոց Տեղասպանութեան լիարժէքօրէն դասաւանդման եւ դրա ուրացման դէմ տարուելիք պայքարի միջոցների մասին: Անհարժէշտ է նկատուել, որ առաւել աշխատանքներ տարուեն պատմութիւն դասաւանդող ամերիկացի ուսուցիչների հետ, որպէսզի նրանք լաւապէս մատուցեն Հայոց Տեղասպանութեան դասանիւթը եւ լիարժէքօրէն գիտակցեն այդ նիւթի կարեւորութիւնը: Միջոցառմանը ելոյթ է ունեցել նաեւ Միացեալ Նահանգների նախկին նախագահներ Ռիչըրդ Նիքսընի ու Ռանըլդ Ռեզընի, ինչպէս նաեւ նահանգապետներ Ջորջ Դուքմէջեանի եւ Փիթ Ուիլսընի քաղաքական ճառերի հեղինակ Քէնէթ Խաչիկեանը, որը խօսել է իրեն քաղաքական ասպարէզ մղած ազդակների մասին եւ կարծիքներ արտայայտել քաղաքական ներկայ իրադարձութիւնների վերաբերեալ: Նշենք, որ Հայ իրաւաբանների միութեան մասին յաւելեալ տեղեկութիւններ ձեռք բերելու համար, կարելի է այցելել միութեան կայքէջը www.armenianbar.org հասցեով:

**Այս լուրերը տրամադրուում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**